ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
АЙГЕКСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

«31» 07 2013թ. N 102

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Ղահրամանյան*

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 29-ի N 29«Ն» որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

7208-13
06 08 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

# ՈՐՈՇՈՒՄ

«29» հուլիսի 2013 թվականի N 29-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-ի N 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին, 5-րդ մասերով, հիմք ընդունելով «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ համայնքի ավագանին *որոշում է*.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեի հաստատման մասին» N 42«Ն» որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) Բյուջեի եկամուտների վարչական մասով՝
   Լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսել 521,7 հազար դրամ գումար եկամուտ պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներին (սուբվենցիաներին):
   2) Բյուջեի ծախսերի վարչական մասով՝
   2.1. Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումների (սուբվենցիաների) 521,7 հազար դրամն ուղղել՝
   ա. կառավարման ապարատի 01.1.1 բաժնի 4111 հոդվածին – 357,7 հազար դրամ.
   բ. նախադպրոցական կրթություն՝ 09.1.1 բաժնի 4511 հոդվածին -164,0 հազար դրամ:
   2.2. Պահուստային ֆոնդից 70,0 հազար դրամ գումար ուղղել կառավարման ապարատի 01.1.1 բաժնի 4112 հոդվածին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| ԿՈՂՄ (7) | | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| Աբրահամյան Նորիկ Գ. | | | |
| Ավետիսյան Ալվարդ | | | |
| Գևորգյան Աշոտ | | | |
| Հովհաննիսյան Ներսես | | | |
| Մխիթարյան Գերասիմ | | | |
| Մովսեսյան Զարզանդ | | | |
| Ստեփանյան Անդրանիկ | | | |

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ